

Գրիգոր Աղթամարցւոյ անձն դժուար է որոշել համանուն եւ ժամանակակից Գրիգորներու մէջ: Չաքարիայի օրով ժ.Ձ դարու առաջին քառորդէն ծանօթ է ինձ երկու Գրիգոր՝ վարդապետ եւ աշակերտ, երկուքն ալ Աղթամարցի: Առաջինն ունի կից յորջորջանք մը՝ բաւունապետ, որ եթէ կաթողիկոսի հետ նոյնիմաստ է, Չաքարիա աշակերտած կ'ըլլայ Բաբունապետիս, եւ այս դէպքին հարկ կ'ըլլայ ուսումնասիրել եւ ճշգրտել Աղթամարայ երկու Գրիգորներու կաթողիկոսութեան անորոշ տարիները, զոր այլուր կը թողունք ի գլուխ հանել:

Նկատելով որ Չաքարիա աշակերտած է Յովսէփ եւ Գրիգոր Աղթամարցիներու, կարելի է հետեւեցնել թերեւս թէ եղած է երբեմն յԱղթամար:

3. Յայտնի չէ թէ ո՞ր տարին, Չաքարիա ձեռնադրուած է եպիսկոպոս - Ամենայն Գնուներաց¹, ասկէ առեալ մերթ կ'անուանէ ինք

1 Գնունեաց դաւառն կը տարածուի Վանայ հիւսիսային կողմն, ուր կը գտնուի Մկայ բերդն, Բերկի եւն: Ըստ Հէրենցի (անդ) կը համապատասխանէ այժմեան Թիմարոյ դաւառի սահմաններուն: Չարմանալի է որ ցայսօր առանց քննութեան մնացած է Հայոց հին պատմութեան մէջ քաջածանօթ ազգիս գրաւած երկրին սահմանները: Անանուն Լրծրունի (էջ 308) առաջին անգամ կը յիշէ Գնունեաց դաւառն Արճիւն քաղաքով (յամի 1041). Վարդան Պատմիչ (էջ 77) դաւառիս մէջ կը գնէ նաեւ Աղիովիտը — «Առ սա (առ Աշոտ) բողոք կալեալ ազգին Գնունեաց՝ թափել զնոսա յիսմայեղացոցն, որոյ երթեալ հազար արամբ յԱղիովիտ դաւառ, եւ առ ինքն գումարեալ զամենայն ազգն ախին իւրեանց, տանի բնակեցուցանէ ի Տայս:» Ժէ դարուն Առաքել Գաւրիթեցի պատմելով Սի-